էր Հովհաննես՝ Գայլ մականունով. սա մի ժամանակ վանքի առաջնորդ էր եղել, ճարտար տոմարագետ էր: Նա ասում էր, թե վանքում մի մեծ հիշատակարան գիրք կար, որ սուրբ թարգմանիչներից մինչև մեզ՝ բոլոր առաջնորդների անուններն ու արարմունքները, և ինչ որ նրանց ժամանակներում հիշատակված էր, բոլորը գրված էր այնտեղ: (Հիշատակարանի) կեսը անգրել թուղթ էր, որպեսզի հետագա առաջնորդները գրեն իրենց անուններն ու արածները: Ասում էր, որ այս կոնդակը (հիշատագիրքը) մինչև մեր ժամանակը գոյություն ուներ: Երբ ջալալիները վանքը ավարեցին, այդ կոնդակը անհետացավ:

Այն գրքում գրված է, թե Քասաղ գետից մինչև Ախուրյան գետը Սուրբ Կարապետի թեմն ու վիճակն էր եղել. այսքանը՝ Գայլից: Նիգ գավառից Վարդան անունով մի քահանա՝ Վարդաբլուր գյուղից, արհեստով քարհատ, ասում էր. «Ես ուսանում էի Օհանավանքում, բազմաթիվ անգամ գնացի Շիրակավան[183], հասն ու իրավունքը* հավաքած բերում էի Օհանավանք: Այս Վարդան քահանան Ապարանի բոլոր գյուղերի հայերեն անունները ասաց, և ես գրի առա»:

Ապարան գավառի Վարդեն գյուղից Գալուստ անունով մի բարեպաշտ մարդ ասաց. «Ես Գրիգոր վարդապետի հետ, որ Օհանավանքի առաջնորդն էր, Շիրակից բերել ենք պտղին, սրբադրամը, յուղն ու պանիրը և վանքի ամբողջ հասը Օհանավանք՝ սայլով մինչև Որդկան, որ կոչվում է Սելախրամ, իսկ այդտեղից գրաստով տարել ենք վանքը, որովհետև ես վանքի մշակն էի»: Նիգից Մարգարե անունով մեկը՝ Աբնագեղ[184] գյուղից, ասում էր, թե մենք բնակվում էինք Ճարճակիս[185] գյուղում, իմ հայրը այնտեղ մեռավ, իսկ նրա հոգեբաժինը տարանք Օհանավանք, դա մի հինգաչքանի ճրագակալ էր, տվինք Գրիգոր վարդապետին, այն դեռևս գտնվում է վանքում, դա պահում են վկայության համար: Նիգից ոմն Թորոս Խոտավիտ գյուղից՝ մի բազմագետ ու ճարտարախոս (մարդ կար): Սա շատ բան պատմեց՝ թե մենք ևս բնակվում էինք Ճարճակիսում, ես մաքսավորների մոտ փոքրավոր էի, որոնք (նստում էին) Քասաղում: Երբ Գրիգոր վարդապետը կամ միաբաններից (մեկը) գնում էր Շիրակավան, որպեսզի վանքի հասը հավաքելով տանեն Օհանավանք, մեզ գինի, միրգ էին բերում, իսկ մենք մաքսի սակը չէինք առնում:

*Եկեղեցական տուրքեր են:

Թորոսի որդի տեր Կիրակոսը, որ դարձավ եպիսկոպոս և նստեց Տեղերի[186] առաջնորդ, ինչ որ իր հայր Թորոսից լսել էր Օհանավանքի մասին, ձեռագրով տվեց մեզ, իսկ մենք ահավասիկ այն ունենք այժմ: Մի ոմն Հովհաննես նույն Խոտավիտ գյուղից, ասում էր. «Երբ Փիլիպոս կաթողիկոսը գնաց Արագած, որպեսզի ցրված ջրերը խառնի Քասաղ գետին, իսկ ապարանցի մելիք տեր Հովասափը և ես նրա հետ էինք: Կաթողիկոսը մելիքին հարցրեց, թե այս երկիրը ո՞ր վանքի թեմն է: Մելիքն ասաց Քասաղ գյուղից մինչև Ղփչաղ, Սուրբ Կարապետի թեմն է, իսկ Շիրակավանը Մարմաշենի հետ միասին երկու վանքի էր պատկանում՝ Սուրբ Կարապետին և Մարմաշենին»: Այսքան և այլ շատ վկայություններ ի լրո, բայց չգրեցինք, որ շատախոսություն չլինի: Այսուհետև ինչ գրքերից գիտենք, այն կգրենք:

ԳԼՈՒԽ Է
ԳՐՔԵՐԻՑ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԹԵ ՈՐՆ Է ՍՐԱ ԹԵՄԸ

Որովհետև հանձն առանք հայտնել սուրբ մենաստանիս մասին, և ինչ որ գիտենք գրքերից թեմի մասին, ցույց կտամ այն առանց ձանձրանալու: Ես գնացի Սուրբ ուխտը Սանահին[187] ինչ-որ պիտույքների համար: Առաջնորդ էր Սարգիս եպիսկոպոսը ազնվական տոհմից, խոհեմ ու չափազանց խելոք մի մարդ էր: Նրա հետ գրքերից խոսեցինք, և նա խոսքի ընթացքում ասաց՝ մենք մի հին գիրք ունենք, բազմաթիվ տեղերում հիշատակում է Օհանավանքը: Մենք այն խնդրեցինք, որը բերեց ինձ տվեց. Սա հին ու վաղեմի փտած գիրք էր և այնքան մեծ, որ չկարողացա ամբողջը կարդալ: Ինչ որ փտած չէր, այն սկսեցի կարդալ մինչև վերջ, պիտանի բաները արտագրեցի և վեր առա հետևյալը. «Եվ մեռավ Մարմաշենի[188] վանահայրը և տեղը նստավ զարմանալի ու սքանչագործ Աստծու այր Երեմիան՝ պարկեշտ ու սուրբ մի մարդ, գիտուն ու զարդարյալ բոլոր առաքինությամբ, կրկին մարդով՝ ներքինով ու արտաքինով: Նաև հրաշքներ էր գործում, մեկը շատերից կասեմ: